Կարգապահական գործ թիվ ԿԳ-22064

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2022 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 102-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԹԻՎ ԿԳ/67-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՍԵՆ ԳՐԻԳՈՐԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ՝ նաև Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Մանե Կարապետյանի, Խորհրդի անդամներ՝ Էմին Բեգլարյանի, Գայանե Դեմիրչյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Լիլիթ Ղազանչյանի և Մարինե Ֆարմանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Արսեն Գրիգորի Դավթյանին (արտոնագիր թիվ 722) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 15.08.2022թ. տրամադրված տեղեկանքի՝ փաստաբան Արսեն Դավթյանը **(այսուհետ՝ նաև Փաստաբան կամ Պատասխանող)** ունի 90.000 (իննսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ 2021 թվականի հունվարից 2022 թվականի հունիս ամիսը (ներառյալ) ընկած ժամանակահատվածի համար անդամավճարի մուծման չկատարման պարտավորություն:

15.08.2022թ. դրությամբ փաստաբանի անդամավճարի ընդհանուր պարտքը կազմում է 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի16.08.2022թ. թիվ 231-Ա/ԿԳ-22064 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել Փաստաբանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ նաև Օրենք)** 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 5-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ նաև Կանոնագիրք)** 2.9.1 և 9.1.3 ենթակետերի խախտման հատկանիշներով:

Սույն կարգապահական գործը 19.08.2022թ. հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի են ունեցել 29.11.2022թ., ժամը՝ 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Խորհրդի նիստի շրջանակներում Փաստաբանի ներկայացուցիչ Գևորգ Դավթյանը հայտնել է, որ պատշաճ կատարել է անդամավճարի գծով իր պարտավորությունները 2019-2022թթ. ընթացքում՝ ներկայացնելով վճարման համապատասխան անդորրագրերը:

Փաստաբանը նիստի շրջանակներում հայտնել նաև, որ Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 15.08.2022թ. տրամադրված տեղեկանքում տեղ գտած տեղեկատվությունից պարզ չէ, թե որ ժամանակահատվածի համար է հաշվարկվում անդամավճարի պարտքը:

Փաստաբանը հիշատակել է Պալատի խորհրդի 06.09.2019թ. թիվ ԿԳ/128-Ա որոշումը, որով անդամավճարի մուծման պարտավորության չկատարման հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճվել է մեղքի բացակայության պատճառով և հավելել, որ նույնիսկ, եթե Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 15.08.2022թ. տրամադրված տեղեկանքում նշված պարտքի գումարը գոյացել է մինչև Փաստաբանի կողմից 06.09.2019թ. չկատարված պարտավորությունների արդյունքում, ապա ստացվում է, որ Պալատը պարտավորության պահանջի իրավունքը իրացրել է 3 տարի հետո:

Փաստաբանը նաև նշել է, որ 19.10.2019թ. խմբագրությամբ Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը ընդունվել է Պալատի խորհրդի 06.09.2019թ. թիվ ԿԳ/128-Ա որոշմամբ Փաստաբանի պարտքն արձանագրելու հետո և որպես նորմատիվ իրավական ակտ չէր կարող տարածվել մինչ ծագած իրավահարաբերությունների նկատմամաբ, իսկ տարածվելու դեպքում էլ չպետք է վատթարացնի անձի փաստացի վիճակը: Բացի այդ, Փաստաբանը նաև հավելել է ցանկացած պարտավորություն կարող է սահմանվել բացառապես օրենքով կամ Սահմանադրությամբ:

Փաստաբանը նաև հավելել է, որ Օրենքով չկա սահմանված որևէ դրույթ, որը հնարավորություն է տալիս փոփոխել անձի կողմից իր իրավունքի իրացման արդյունքը՝ որպես օրինակ ներկայացնելով այն, որ, եթե Փաստաբանը ունի պարտք տվյալ ամսվա համար և վճարում է այն, ապա Պալատը կարող է այդ պարտքն ուղղել մինչև տվյալ ամիսը գոյացած պարտքի մարմանը: Փաստաբանը հայտնել է, որ եթե անձը նշվածի մասին տեղեկացված լիներ, ապա ինքը կընտրեր կատարել վճարումը, թե ոչ:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) Փաստաբանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 19.10.2007թ. (հաստատվում է Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքով),

2) Փաստաբանն ունի 90.000 (իննսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ 2021

թվականի հունվարից 2022 թվականի հունիս ամիսը (ներառյալ) ընկած ժամանակահատվածի համար անդամավճարի մուծման չկատարման պարտավորություն (այդ թվում՝ կարգապահական վարույթ հարուցելու որոշմանը նախորդող 6 ամսվա ժամանակահատվածի համար): Փաստաբանի անդամավճարի ընդհանուր պարտքը կազմում է 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ: Նշված փաստը հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 15.08.2022թ. տրամադրված տեղեկանքով:

3) Փաստաբանն իր անդամավճարի պարտքն ամբողջությամբ չի մարել: Նշված փաստը հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 29.11.2022թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ տեղեկանքը տրամադրելու օրվա դրությամբ Փաստաբանը չունի կարգապահական տույժ:

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները՝ Պալատի խորհուրդը գտնում է, որ Փաստաբանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով:*

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտի կամ դրա մասի գործողությունը տարածվում է մինչև դրա ուժը կորցնելու օրը գործող հարաբերությունների վրա, եթե օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին նորմատիվ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:*

Այս համատեքստում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սույն կարգապահական գործի շրջանակներում ***բարձրացված հարցերը փաստացի վերաբերում են 2021-2022 թվականի ընթացքում Փաստաբանի կատարված գործողություններին***՝ այսինքն համապատասխան իրավահարաբերությունների ծագման և կարգապահական վարույթի հարուցման պահին, փաստացի գործում էին՝ մինչև ««Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի հոկտեմբերի 5-ի ՀՕ-366-Ն օրենքի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 24.12.2022թ. թիվ 1/3-Լ որոշման ընդունումը, «Փաստաբանության մասին» օրենքը հին խմբագրությամբ **(այսուհետ՝ իրավահարաբերությունների ծագման պահին գործող խմբագրությամբ «Փաստաբանության մասին» օրենք)**, Կանոնագրքի 9.1.3 ենթակետը հին խմբագրությամբ:

Իրավահարաբերությունների ծագման պահին գործող խմբագրությամբ «Փաստաբանության մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և*

փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար:

Իրավահարաբերությունների ծագման պահին գործող խմբագրությամբ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ*:

<u>Կանոնագրքի 2.9.1 ենթակետի խախտման մասով</u>

Կանոնագրքի 2.9.1 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար*:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (**այսուհետ՝ նաև Կարգ**) 7-րդ կետի՝ *Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը,* իսկ Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ *Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:*

Վերոնշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության:

Փաստաբանը խախտել է վերը նշված կանոնների պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից տրամադրված տեղեկանքով:

Կարգի 8-րդ կետի համաձայն՝ ….. *Փաստաբանի անդամավճարը վճարելու պարտավորությունը լրիվ կատարելու համար վճարված գումարի անբավարարության դեպքում, առաջին հերթին մարվում են փաստաբանի համար ավելի վաղ ժամկետում առաջացած անդամավճարի պարտավորությունը՝ անկախ վճարման փաստաթղթում նշված նպատակից:* ***<u>Փաստաբանի անդամավճարի ժամկետանց պարտքի գումարը ինքնաշխատ ձևով միացվում է փաստաբանի անդամավճարի հերթական պարտքի գումարին և ենթակա է վճարման հերթական անդամավճարը վճարելու ժամկետում</u>***:

Այս համատեքստում, անդամավճարը վճարելն իրենից ներկայացնում է ոչ թե փաստաբանի իրավունքը, որը նա կարող է իրացնել իր հայեցողությամբ, այլ յուրաքանչյուր փաստաբանի Օրենքով սահմանված պարտավորությունը, որը ենթակա է կատարման Պալատի խորհրդի կողմից սահմանված կարգով: Նշված կարգն ի թիվս այլնի, իր մեջ ներառում է նաև որոշակի երաշխիքներ տվյալ պարտավորության պատշաճ կատարման վերաբերյալ՝ մասնավորապես, ավելի վաղ առաջացած պարտավորությունների մարման առաջնահերթության մասով, ինչն իր հերթին միտված է ապահովելու պարտավորության մարումն ամբողջ ծավալով:

Տվյալ դեպքում, չնայած նրան, որ Պատասխանողի նկատմամբ անդամավճարի վճարման պարտավորության չկատարման հիմքով հարուցված կարգապահական վարույթը Պալատի խորհրդի 06.09.2019թ. թիվ ԿԳ/128-Ա որոշմամբ կարճվել է, այնուամենայնիվ դա ինքնին չի նշանակում, որ Պատասխանողի պարտքը մարվել կամ ներվել է: Նման պայմաններում Պատասխանողի կողմից անդամավճարի ցանկացած վճարման կատարում ուղղվում է ավելի վաղ ժամկետում առաջացած

անդամավճարի պարտավորության մարմանը և որևիցե կերպ չի կարող հաշվարկվել այլ կերպ, քան սահմանված է Կարգի 8-րդ կետով:

Այսինքն, Պատասխանողը չի կատարել ամսական կտրվածքով անդամավճարները վճարելու իր պարտականությունը (այդ թվում՝ չի կատարել Պալատի նախագահի՝ կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշման կայացման օրվա դրությամբ վերջին վեց ամիսների մասով անդամավճար վճարելու պարտականությունը):

Վերոգրյալը հաշվի առնելով՝ Խորհուրդը գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա է Կանոնագրքի 2.9.1 ենթակետի խախտում:

<u>Կանոնագրքի 9.1.3 ենթակետի խախտման մասով</u>

Կանոնագրքի 9.1.3 ենթակետի հին խմբագրության համաձայն՝ *առնվազն 18 (տասնութ) ամսվա անդամավճարի չափով պարտք ունեցող փաստաբանի կողմից հերթական որևէ ամսվա անդամավճարը չվճարելը համարվում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում: Առաջին անգամ սույն ենթակետի հիմքով հարուցված կարգապահական վարույթի արդյունքում փաստաբանի նկատմամբ Պալատի խորհուրդը կիրառում է նկատողություն կամ խիստ նկատողություն, եթե փաստաբանն ամբողջությամբ վճարել է պարտքի գումարը և Պալատի խորհրդի որոշումը կայացնելու օրվա դրությամբ Պալատի նկատմամբ անդամավճարի գծով որևէ պարտք չունի:*

Խորհուրդն արձանագրում է, որ նշված ենթակետում մատնանշված 18 ամիսը հաշվարկվում է 2021 թվականի հունվարից մինչև 2022 թվականի հունիս ամիսը ներառյալ, երբ կուտակվել է Փաստաբանի անդամավճարի պարտքը:

Բացի այդ, Պալատի խորհուրդն անհրաժեշտ է համարում արձանագրել նաև, որ սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ Փաստաբանն ամբողջությամբ չի վճարել պարտքի գումարը, Պալատի նկատմամբ անդամավճարի գծով ունի պարտք:

Տվյալ դեպքում, Պալատի խորհուրդը գտնում է, որ Փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի նրա կողմից կատարված խախտմանը և անդրադառնալով կիրառվող կարգապահական տույժի տեսակին Խորհուրդը հաշվի առնում վերոնշյալ հանգամանքներն, այդ թվում խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև Փաստաբանին բնութագրող այլ հանգամանքները:

*****

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ կարգապահական տույժ կիրառելը Պատասխանողին չի ազատում անդամավճարի պարտավորությունից:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով իրավահարաբերությունների ծագման պահին գործող խմբագրությամբ «Փաստաբանության մասին» օրենք 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի պահանջներով՝

Պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արսեն Գրիգորի Դավթյանին (արտոնագիր թիվ 722) ճանաչել մեղավոր իրավահարաբերությունների ծագման պահին գործող խմբագրությամբ «Փաստաբանության մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 5-րդ կետի և Կանոնագրքի 2.9.1 և 9.1.3 ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Արսեն Գրիգորի Դավթյանի (արտոնագիր թիվ 722) նկատմամբ կիրառել տույժ՝ «խիստ նկատողություն»:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Արսեն Գրիգորի Դավթյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ որոշումը ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բողոքարկման համար սահմանված ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Մանե Կարապետյան

29 նոյեմբերի 2022թ.
թիվ ԿԳ/67-Ա
ք. Երևան